

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2012 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ

*I. Ընտրությունների արդյունքներով Գավառի պետական համալսարանի խորհրդի նախագահ ընտրել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հրանտի Հակոբյանին:*

*II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետով՝*

*ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2010-2011 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2010-2011 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

*III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը՝ համալսարանի 2011 թվականի ֆինանսական տարվա գործունեության վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2011 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը:

*IV. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2012 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվի վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2012 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն, համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2012 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

*V. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի 2011 թ. կատարման վերաբերյալ՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հաստատել ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի 2011 թ. կատարման վերաբերյալ հաշվետվությունը:

ԳՊՀ խորհրդի քարտուղար՝ Վ. Լ. Կատվայան